

U. Z.

63

63

2012

Տ Ե Խ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱԱՐԿԱՆ

Կ Տ Ա Կ

Հ Ր Ա Կ

Հանգուցեալ Տէր Ձմադդէսոս Արքաղան Բ, օք Խափսկո-
պոսի Բէգնազարեանց Ձմակալ Առաջնորդի Հայոց Պարսկաս-
տանու և Հնդկաստանի, վախճանելոյ ՚ի 16 Յունիլարի 1863
ամի :



Դ Տ Պ Ե Ր Ե Ն Ի

ՌՄԵԿԵՐՓԻՉԵՐԵ Ս. Ա. Ա. Ե Ց
ՆՈՐ ԶՈՒԳ ԵՑՈՒ

1892

Ձ Հ

Ա. Օ. Պ.

Առարկութիւնք բազում եին 'ի մերձաւոր և և 'ի հեռաւոր մերազնեայս զծածկութենէ հանգամանաց Կտակին 'ի Տէր Հանգուցեալ Թադդէոս Արք Նպիսկոպոսի Բէզնազարեանց՝ որ Երեսնամօք յառաջ քան զյօն, արդիւնաւէտ Առաջնորդութեամբ իւրով, փայլէր 'ի Թեմիս Հայոց Պարսկաստանու և Հնդկաստանի. մանաւանդ թէ՝ 'ի չորից Կտակսկատարաց կարգելոց 'ի Կտակարարէն, մին և եթ կայր ներկայ, յոյը ձեռս գտանիւր Կտակն իւրով պարագայիւքն, իսկ միւս երեքն անցեալ գնացեալ էին Կամ փոխմամբ յաստեացու և կամ հեռանալով 'ի ջուղայէ, և այս առաւել յուղէր զմիտս առարկողացն թէ՝ ուր ունդիցի յանզիլ գործ Կտակին :

Հանցելում ամի պահանջնցաք յԱրժանապատիւ Տէր Մարտիրոս Աւագ Գահանայէն Տէր Յովակեմեանց, որ էր մին 'ի չորից Կտակակատարաց զի ներկայացուացէ մեզ զկտակ հանգուցեալ Թադդէոս Արք Նպիսկոպոսի՝ հանդերձ իւրով մանրամասնութեամբք 'ի տես և 'ի ծանօթութիւն, և նա յօժարակամ կատարեաց զպահանջ մեր և ներկայացոյց :

Ու էակտե սեպուհ պարտականութիւն մեր էր գործել զվերահասութիւն ստուգութեան հաշուոցն և Ճշդիւ կատարման պատուէրիցն աւանդելոց 'ի Կտակին, այլ քանզի անցեալ էին 'ի վերայ ժամանակք բազումք և թերևս մնայր 'ի մէնջ ծածկեալ ինչ, զորմէ անտեղեակ գոյն մեր անշուշտ տալոց էը յապազայումն տեղի նոր առարկութեանց, ուստի բարւոք համարեցաք զկտակն և զմանրամասն տեղեկութիւնս վերաբերեալս նմին, նախ նոյնութեամբ տալ 'ի տպագրութիւն յառանձին տետրակ մի՛ և հրատարակել 'ի ծանօթութիւն մերազնէից. և ապա առնել զարժանն :

Արդ՝ Խաղոթի ՚ի բարեմիտ ազգայնոց, ուշի ուշով ըն-
թեռնուշ տեղբակ, և եթէ տեսցին ՚ի սմա գիտողութեան
արժանի ինչ, հաճեսցեն տալ մեջ զժանօթութիւն, զի և մեք
ըստ այնմ գործեսցուք զվերահասութիւն և աւարտեսցուք զգործ
կտակիս, որով մի մնաքանյն վախճան տացին անօդուտ առարկու-
թեանցն :

ԵՍԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Պարսկ" և Հնդկ"



(Տ ՎԵՐԵՅ ՊԵՇԵՐԵՆԻ ԳՐԵԼՈ, ԿՐՅ :)

Անձնական կտակ Սրբազան Թագիեսոս Արք Եպիս-
կոպոս Ամենապատիւ Առաջնորդի Զուղայու Ամենափրկչեան սուրբ
Վանաց : Կնքեցաւ յ' 3 . Նոյեմբերի 1858 . ամի ՚ի Զուղայ ՚ի
սուրբ Վանս Ամենափրկչի :

Պատուիրեմ բանալ զայս պահարան կտակի, զկնի
մահուան իմոյ Կտակակտարքն իմ, որք են Տէր Մարտիրոս Ա-
ւագ Քահանայն Տէր Յովակիմեան : Տէր Բարսեղն Գալստան-
եան, և Պարոնայք Յարութիւն թ . Տէր Յովհանեան, և Ղա-
զարոսն Օհանեան Ծովինարեանց :

(Ձեռն") թ . Եպիսկոպոս Բէկնազարեանց :

Ամենախնամ պահպանութիւնն Աստուծոյ պահելով
զիս կենդանի, շնորհեաց ինձ վճարել զ խոստումն իմ յանուն
արդէն հանգուցեալ Տէր Մկրտիչ Քահանային Անդրէամեան ո-
րով և արար զիս պարտավճար կենդանութեամբս :

(Ձեռն") թ . Եպիսկոպոս Բէկնազարեանց :

Յանուն ամենասուրբ Երբորդութեան Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ, ամէն . Կտակ յետ մահուան հաստատուն է,
ըստ Սրբազան Առաքելոյն Պողոսի :

Հայութ Արք Եպիսկոպոս Առաքելոյն Պողոսի
Բէկնազարեանց .

Ես Թագիեսոս Եպիսկոպոս Բէկնազար-
եանց, ազգաւ Հայ ծնեալ յերկան Քա-
ղաքի և Միաբան Սրբոյ Մօր Աթոռոյն
Կաթուղիկէ Էջմիածնի, և այժմ Առաջ-

Նորդ Զաւղյուս Սրբոյ Ամենափրկչեան վանի, և բոլոր վիճաւ կաց նորա, որ հաւատամ խոստավանիմ և գաւանիմ և երկիր պազանեմ անայլյալ մինչ ցել շնչոյս, զամբիծ և զուղիղ հաւատոս, սահմանեալ 'ի Սրբազն Առաքելոց, և 'ի բազմաչարչար Սրբոյ Հօրէն մերմէ Լուսաւորիչ Գրեգորէ, զոր ընկալեալ դաւանէ յարգութեամբ սուրբ և Առաքելական Կաթուղիկէ Եկեղեցին Հայաստանեայց, և այժմ նոյն հաւատով և երկիւղիւն Առտուծոյ, կատարեալ մոօք, անթերի բանականութեամբ, անբիջ խորհրդով, և առողջ զգայարանոք, զամենայն զոր ինչ իմ վերջին իղձ՝ փափագ, ցանկութիւն և կամք էր, սովաւ կտակագրեմ, աւանդեմ և պատուիրեմ, զի զինի մահուան իմոյ հաստատուն լիցի և անխախտ :

Յայտնի է ամենեցուն, զի ի մուտ գործելն մեր՝ ի վանս յԱրտաջնորդութիւն, վանքն կայր ծանրացեալ ընդ մեծամեծ պարտիւք, և մեր խնամ տարեալ սմա մինչ ցայսօր թէ պէտ չթեթեացուցաք իտպառ, ոտկայն չթողաք ևս քան զես խրիլ՝ ի ներքոյ պարտօց, այլ մեզէն հոգ տարաք ամենայն պիտոյք սորտ, յօւսով վերաստացման յետ այսու, որպէս Պատուելի Հասարակութիւնն ջուղայուս, յանցեալ ամի ՚ի վերջանալն տարւոյն տեսին մանրամասնապէս զհաշիւ վանիս, որով գտին զի վանքն մնաց մեզ պարտական չորս հարիւր և յիսուն թուման, և քանի հազար դեան, յետ որոյ և մինչ ցայսօր ամենայն պատկանաւոր ծախսք վանիս արարեալ եմք մեզէն, առանց ծանրանալոյ, ումեք, և թէ որչափ մնամք պահանջող ՚ի վանէս, զայն

ամենայն ցուցանեն հաշիւք վակիս : Արդ մեք մեղէն յընթացս
այսչափ ժամանակի լուաջնորդութեան մերում, քաջ ծանեաք .
զի ոչ յուտեքէ կարեար էր վճարումն պարտուց վանին, եթէ
ոչ յԱրժանաւոր և 'ի Պատուելի Հնդկաբնակ ժողովրդոց անտի ,
ուստի և մեք ըստ հնագանդ սովորութեան, նուիրակութեան
կոնդակ առաքեցաք անդր. զի զովորական տուրս իւրեանց որ
առ Մայր Աթոռն իւրեանց տալրվ, ազատեսցեն զսա 'ի պար-
տուց, վասնորոյ պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմաց .
զի յետ 'ի ձեռս գալը ասացեալ տուրս Հնդկաբնակ ժողո-
վրդոց, ստացեն 'ի վանիս զպահանջ իմ, թէ յանցեալ և թէ
սոյն ամի, և յետ ստանալոյն արասցեն և կատարեսցեն ըստ
լետագայ պատուիրանիս :

Ա-աշխատուիրեմ սիրելը կտակակատարաց իմոց, զի հասուցեն հաւատարմապէս առ Մայր Աթոռն սրբոյ Եջմիածնի զերեք հարիւր թումանու : Որովհետև ասացեալ Մայր Աթոռն երկից շնորհ արար զիս, տալով առաջին անդամ մի հարիւր թուման, և երկրորդն մի հարիւր և միսուն, վասնորոյ չկամրմ պարտաւոր մնալ Աթոռոյն : թուման 300..

Պատուիրեմ սիրելի կտակակտարաց իմոց , զի
քաղաքամեայ և հաւատարիմ սպասաւորին իմոյ զաղարու
Օհանեան տալ զմի հարիւր թուման , իրեւ նուեւր հայրա-
կան օրջութեանս , նաև յարծաթեղինաց իմոց տալ
պատուիրեմ սոյն զաղարիս , զերկու երծաթեայ ջուր խը-
մելէ ջամն , որոց մնի մէջն է ոսկեզօծ . զերկու եր-
ծաթեայ աղաման , մի սրտաձև երծաթէ դութի , և
մի զոյգ երծաթէ կաղամար : Այլև պատուիրեմ յանձ-
նել սոյն Ղաղարին , զերծաթեայ և զսկէզօծ դութին .
զոր տուեալէ ինձ Տէր Նիկողայոս Տէր Յարութիւնեան ,
վասն մօր իւրոյ : Զատագաֆէ զութին վասն հօրաքեռն , և
զմի հասարակ զութին , յորոյ վերայ կայ շիշայ և պատ-
կեր թուչոց , մօրաքեռն , 100

Միւս երեսի գումարն է 400 ,,

Երբեր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց . զի տացեն բազմաշխատ և հաւատարիմ զբադրին սրբոյ վանիս և իմ անձնականին Պարոն Յարութիւնին թ . Յարութիւն . եանց զյիսուն թուման ՚ի նշան սուրբ սիրոյ և նուէր հայրական օրչութեան , զյգ ընդ նմին և տացեն ջըմ . բուխտ մատանիս ՚ի վայելս իւր անձնականի , առանց ուժեք նուիրելոյ կամ վաճառելոյ :

Չարեր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , զի տացեն Տիկին թագուհի Պազարեան , որ է դուստր Յարութիւն Մարտիրոսեան եղբօրն իմոյ , զմի Հարիւր թուման : Սա որովհետեւ գրեալ էր ինձ զաղքատութենէ իւրամէ և զխղճութենէ . վասն այն պարզեցմ , նախապէս ըզգուշացուցանելով զնա , զի մի իշխեսցէ բռնադատել զկտակակատարս իմ վասնայնորիկ , քանզի պատուիրեմ նոցա , զի յետ ամենայնի պատուիրանացս ՚ի կատար ածելոյ , եթէ մնաց գումար ինչ , յայնժամ ունիցի իրաւունս ստանալոյ զնշանակեալս

50 ,,

Հնագերոր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , համեմատ վերոյին չորրորդ յօդուածոյ դաշանց և պատուիրանացս , տալ և Տիկին Գայիանէ դստեր մեծ եղբօրս զմի Հարիւր թուման : Սա որովհետեւ լեալ է Տէր և ինսամածու որբոց փոքր եղբօրս . վասն այն և պատուիրեմ տալ զերծաթեայ և մինայ արարեալ զութին , զոր տուեալ է ինձ Պարոն Սարգիսն Մ . Տէր Ռուկանեանց 100 ,.

100 ,,

Վէշերոր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , տալ Առաքել Նազարէթին , որ բնակի աստ ՚ի Զուղա զտասն թումանս , սակս աղքատութեան նորա 10 ,.

10 ,

Եօներոր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , տալ մօրն Խօսրոֆի և ընտանեացն զտասն թուման , որ բնակի աստ ՚ի Զուղայ , սակս աղքատութեան նոցա 10 ,.

Միւս երեսի գումարն է 670 ,,

Ո-Եւրոր . Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , տալ Գալուստին Թորոսեան , որ էր երբեմն տիրացու սուրբ վանիս գքսան թուման : Թէպէտ սա ընդդէմ ակնկալութեան իմոյ և յուսոյ , փոխեաց զվարս իւր դէպ ՚ի մեծամտութեան և փքութեան , և ապայոյս զիս արար , սակայն ես որովհետեւ ՚ի ժամանակի լաւ համարմանս զնա , ուխտեալ էի կտակել ինչ վասն նորա , վասնորոյ լոկ վասն չդժրելոյ զուխտ իմ և զխոստում , առնեմ նմա զշնորհա զայս :

20 ,,

Իներոր . Ըընթացս Առաջնորդութեան իմոյ ՚ի վանիս , որովհեաւ տեսի զՏէր Մկրտիչն Տէր Անդրէասեան շատ անմիթար վասն անզուսպ կենցաղավարութեան իւրոյ , որով և տարագրեալ միշտ . վասնորոյ պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , զի յետ մահու նորին ՚ի պէտս ծախուց թաղման նորին տացեն զտասն թուման 10 ,.

Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , զի եթէ գտցի ՚ի ձեռս ումեք պարտեմաթուղթ յիմ անուն , պարտեն հատուցանել , նոյնպէս և ստանալ . յումէն և գտանիցի մուրհակ կամ խոստումնաթուղթ ինչ ՚ի թղթեամն իմ անտարակոյս : Նոյնպէս և ունիցին զիրաւունս սիրելի Կտակակատարք իմ , զի ՚ի հեռաւոր տեղեաց եկեալ գրութիւնք իմապատկան , ինքեանք պաշհեսցեն , մանաւանդ և եթէ դէպ լինիցի լինել վասն իմ գումար ինչ կամ նուէր , նոյնպէս նոքա ունիցին զիրաւունս ստանալոյ առանց ումեք պահանջողութեան :

Ունեմ առ գերապատիւ Աղայ Պետրոսն Ներսիսեանց զչորս հարիւր թուման , յորմէ և ունեմ զմուրհակ , զի ՚ի լրանալ սոյն ամի հատուցանել պարտէ Նորին գերապատութեան : Խնդրեմ դարձեալ ՚ի նորին գերապատութեանէ (եթէ սիրելի Կտակակատարք իմ և տ

Գումարն է զոր տանկմ միւս երեսն 700 ,.

Պիւս երեսի գումարն է 700,
համաձայն գտցին՝ 'ի տնօրէնութիւնս իմ' զի յետ լ րանա-
լոյ ժամանակին, վերստին պահեսցէ զայն զումար առ
ինքն շահով այլ ևս մի ամ կամ երկուս ըստ հաճութեան
սիրելի կտակակատարաց իմոց, տալով նոցա զնոր մուրհակ
յիշատակելով՝ 'ի նա զիմ անուն։ Գատութիւն սիրելի կտա-
կակատարաց իմոց, զի եթէ նորին գերազանցութիւն Ա-
ղայ կարապետն Գրիգորեան Ստուաֆօվեանց, որ ըստ
զրաւոր խոստման իւրոյ որ 'ի Թէ հրան, կատարել հաճեցաւ
զուխտ իւր, այն է զի իւր խոստացեալ մի հազար ոսկու
տոկոսեօքն բերել տայցէ զվարժապետ մի, վասն ուսու-
ցանիլոյ զտանինքին մանկունս ջուղայու յանուն նորին
գերազանցութեան յԱմենափրկչեան վանիս, և որպէս 'ի
ներքոյ իւր խոստացեալ 1,000. ոսկուն, գրաւ է եղեալ
զամենայն ստացուածս իւր վասն ապահովութեան, և հա-
ճեցի նոյնպէս զրաւ տալով և ստանալ զիեր նշանակեալ
չորս հարիւր թումանն հանդերձ անցեալ վաշխիւն,
ուրեմն յանձնեցեն զայն գումար նորին գերազանցութեան
ստանալով՝ 'ի նմանէ զպարտեմաթուղթ վերոյին նիւթովք,
որպէս զի տոկոսեօք երկոցունց գումարացն կատարելա-
պէս շարունակեցի Աստուածահանց առաջադրութիւն այն,
իսկ եթէ փոփոխութիւն ժամանակին այլ իմն կերպ փո-
խեց զմիտ նորին գերազանցութեան, կամ չհաճեցաւ
համեմատ պատութրանացս ստանալ զգումարն այն, ու-
րեմն սիրելի կտակակատարք պահեցին զայն գումար
յապահովութեան և յարդիւնաւորութեան, մայր գումար
մնացի յանշարժութեան, և եկամուտ նորա տացի 'ի
պէտս նորահաստատ Դպրոցաց ջուղայրւս, որք տակա-
լին չեն 'ի հաստատ դրութեան ըստ մեղաց իմոց, այլ
երերին, և զօդութիւն և զպահպամութիւն 'ի բարե-
պաշտից խնդրեն և եթէ 'ի դէպ վարկցեն սիրելի կը-

տակատարք իմ, մասն ինչ 'ի տոկոսեաց անտի, բաշխես-
ցեն յաղքատս և 'ի տնանկս ջուղայրւս։

Պատուիրեմ սիրելի կտակակատարաց իմոց զ ի-
ւոանորդական մօհրանայք մինչչև չէ եկեալ նոր Առաջ-
նորդ խոտիւ պահանջեսցեն, թէ 'ի զիւղօրէից, և թէ
յաստի և յայլուր, նոյն եկամուտ ծախեսցեն, յԱռաջնորդա-
րանի վանիս վասն առաւել շքեղութեան։

Պատուիրեմ սիրելի կտակակատարաց իմոց,
զի ստացեն՝ 'ի ձեռաց տփոյ իմոյ զեօթանասուն և երկու
մաջար ոսկիս, զոր պահեալ եմ 'ի պէտս թաղման իմոյ, և
առնել ըստ յետազայ պատուիրանաց։

Տացեն Օծումչէք օծողին իմոյ զտասն ոս-
կիս, պատարագիչ քահանային զմի ոսկի։ Օծողն նա
պարտէ լ ինել որ զպատարագն մատուցանէ, և կամք իմ է
լինել նա Խաչապսակ Տէր Մարտիրոսն Ցէր Յովակիմեան,
սիրելի կտակակատարս ոսկիս 11.

Բովանդակ քահանայք ջուղայրւս են տաճ-
և ինն, ամենեքեանք ներկայ գտցին յետ փշման հոգւոյս,
և այնպէս միաբանութեամբ կատարեսցեն զկարգ թաղմանս,
իւրաքանչիւր քահանայի տալ Պատուիրեմ սիրելի կտա-
կակատարաց իմոց զկրկնական ոսկի, որ բովանդակի 'ի 38.

Ներկայ գտցին և սրբասուն դասք Կուսանաց,
և կատարեսցեն զնոցապատկան աղօթս, վասն թօղութեան
մեղաց իմոց, պատուիրեմ սիրելի կտակակատարաց իմոց,
տալ նոցա իւրաքանչիւրոց զմի ոսկի, որք են ընդ ամե-
նայն տասն և եօթն ողիք 17.

Եթէ 'ի ժամ մահօւան իմոյ հանդիպեսցին աստ
զիւղացի քահանայք նոցա ևս շահել պատուիրեմ սիրելի
կտակակատարաց իմոց, ըստ արժանեացն և նոյնպէս և տի-
րացուաց և մանկանց որ յսպասաւրութեան գտանիցին
18.

՚ի Ժամ յուղարկաւորութեանս , նոցա ևս վարձատրել պատ-
ռւիրեմ , յայսոսիկ հանգամանս և տացեն զմնացեալ վեց
սովորութեան

Իսկ յաւուրս եօթներորի պատուիրեմ սիրելի
Կոտակատառաց իմոց առաքել զժամոյց առ իւրաքանչեւր
Եկեղեցիս , և այն Լիգի ըստ Թուոյ Քահանայիցն , իւրա-
քանչիւրոցն մի մի դռան նոյնպէս և յաւուրս քառասնից
և 'ի տարելիցն : Ծախսք այսոցիկ ևս լինիցին յիմ ոեփական
ստացուածոց անտի , զոր պարտեն սիրելի կտակատառաքս
առնել և կտարել ըստ պատուիրանաց :

Պատուիրեմ սիրելի կտակակատարացս , զի ըստ
յետագայ պատուիրանացս կատարեցեն և բաշխեցեն զայլ
սեփական ստացուածք իմ :

Տամ և բաշխեմ սիրելի Տէր Մարտիրոս Խա-
չապսակի Քահանային, Տէր Յովակիմեան զձեռաց իւաչ իմ
Երծաթեայ, զանթիքայ կանաչագոյն քարէ ղութին, յո-
րում կայ Ռուսերէն առառվ գրեալ՝ ի թղթի զանուն քա-
րին, զմի ջամ մանիլայի կտէ : Նա և շնորհեմ նմա զձե-
ռաց կրելի ցուպ իմ, և ոովին կտակաւանդութեամբ տամ
իրաւունս նմա, իբրև հաստատ վկայականաւ, զի յետ
մահուան իմոյ կրել զայն՝ ի կարգի, թէ յարտաքին և
թէ ի ներքին շրջագոյնթեան իւրոյ, և ո ոք յետագոյ
Առաջնորդի թէ ըստ մարդկային կրից ընդդէմ այսր մեր
հրամանի հակառակ կացցի, ինքն պարտական լիցի տուաջի
Առաջնորդոյ, և Տէր Մարտիրոսն զորութեամբ կտակիս, ու-
նիցի զիրաւունս բողոքելոյ զհակառակողէն առ բարձ-
րագոյն Իրաւարանն առ Սինօթն որբոյ Էջմիածին : կամ
ուղղակի առ Արքազան Հայրապետն :

Տամ և բաշխեմ Տիրուհի Յաննայի Տէր Մարտիրոսեան զերծաթեայ փառչն , զոր գնեալ եմ ՚ի հօրա-

քեռէն սորա 'ի կնոջէն չանգուցեալ Տէր Յովհաննու Տէր Ա-
ւետէան : Տամ և բաշխեմ Օրիորդ Մարգարտին Տէր Մարտի-
րոսւտան զալմաս մատանին ձեռիս . որոյ շուրջն ունի և մանր
գալմաս , նոյնպէս և մրւո քեռն սորա Մարիամուն զմիւս ալ-
մաս մատանիս , հանդերձ հայրական օրհնութեամբ :

Տամ և բաշխեմ Պատուարժան Աղյա Պետրոսին Ստե-
փանոսիթեան Աղանուրեանց զերծաթեայ ղութին, զոր տօւեալ
է ինձ որդեգիրն իմ Տէր Գրիգորն Տաքաղեանց : Մայնթացա
Առաջնորդութեան իմոյ, որովհետև զոր ինչ Անգղիերէն բար-
բառով գրութիւնք Հարկաւորեցին մեզ, գրեաց առանց տըր-
տնշանաց և առանց ծանրութիւն ինչ Համարելոյ, վասնորոյ
և մեք երախտագէտ այսմ աշխատանաց նորա, նուիրեմք զա-
սացեալ ղութին, զոյդ ընդ նմին և զհայրական օրէնութիւն մեր :

Տամ և բաշ խեմ Տէր բարսեղին Գալստանեան ըզ-
կապոյտ նիլում մատանիս . զոր ինքն նախ քան զայս ըն-
ծայեաց ինձ , զնոյն գարձուզանեմ նմա հանդերձ օրչութեամբ :

Տամ և բաշխեմ Տիկին Կատարինէ Մ . Զօրա-
քեանց զերծաթեայ զութին , զոր աւանդեաց ինձ հանգուցեալ
Մարիամնան հարս նորա , որովհետու չըաջօղեցաւ ինձ 'ի գործ
ածել զայն , վասնորոյ թողում առ ասացեալ Տիկինն 'ի յիշա-
տակ մեզ երկողունցա՞ :

Տամ և ընծայեմ Ծաղկարար Սահակ Եպիսկոպոսին
Եթէ կենդանի իցէ , զերծաթեայ երկու երեսանցի զութին ,
զոր տուեալէ ինձ հանգռցեալ Տէր Մատթէոսն Գրիգորեան
Իսկ Եթէ չէ կենդանի նա , ուրեմն թողում զայն ՚ի կամս սի-
րելի Կոտակակատարաց իմոց :

Տամէ պատուիրեմ սիրելի՝ Կտակակատարաց իմոց, զի
զլանչական Անդամանդեայ խաչն զոր՝ տուեալ էր ինձ հոգե-
որ Տէրն իմ Սրբաղնագոյն կաթուղիկոսն ամենայն Հայոց Ներ-
սէս, վերստին դարձուցանել առ սուրբ Օծութիւնն . ըստ որ-
ում չունեմ ես այնպիսի արժանաւոր տեղի նուիրելոյ զայն,
մահաւանդ և զի նոյն պարզւատուութիւնն եղև անկանոն և
առանց վկայականի : Նոյնպէս և Պնակիս դարձուցանել պատ-

ուիրեմ առ սուրբ Աթոռն Էջմիածին, զի՞ թէ հրան կորուսանելով զանձնական իմ, խնդրեցի յանտի զայն զոր ունեմ, վասնորոյ օւստի խնդրեցի և անդր դարձուցանեմ:

Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց, զի ըզքառանկիւնի բոլիանդ Անդամանդեայ մատանիս, յորոյ վերայ փորագրեալ կայ զթիւ օժման հոգելոյս Էփրեմ Կաթուղիկոսին, դարձուցանեշ առ սուրբ Աթոռն Էջմիածին:

Տամ և բաշխեմ Սրբազն զուկաս Արք Եպիսկոպոսին տեղապահին սրբոյ Էջմիածնի: զմոզայի Ծալն, զոր նուիրեաց ինձ Կնիազ Դաւիթն ՚ի թէ հրան: Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց, զի իմ ունեցեալ երեք հատ Ակնոցքն, ընդ նոսին և հանգուցեալ Տէր Յովակիմ Արքահամիակնոյն առաքել յԱթոռն սրբոյ Էջմիածնի, յորոց անտի որքանն որ կամիցի ասացեալ Սրբազն զուկաս Եպիսկոպոսն, ստասցի և մնացեալն մնացի յԱթոռի անդ ՚ի պէտս ապառնի վայելողաց:

Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց, զի ՚ի հանդերձեղնաց անտի իմոյ առաքել Տաթեացի Յովհաննէս վարդապետին, որ է հոգեծին զաւակ իմ, զմահուդ չուխէն, ըզտրիդիգան Փարանէն, զգեղին ծաղկով կապէս, և զմի Երծաթեայ Ռանդունաշէն ջամն ՚ի վայելս նորին իսկ: Իսկ մնացեալ հանդեղձեղէնք իմ հսուտիք, բովանդակն ըստ խոհեմ տնօրէնութեան սիրելի Կտակակատարաց իմոց, բաշխեցեն յաղքատե ՚ի կարօտաւոր Քահանայո սահմանացն և ջուղայուս. Բայց վեղարք իմ թէ նոր և թէ հին, պահեսցեն ՚ի վանիս, ՚ի վայելս յետադայ գործածողաց:

Տամ և բաշխեմ Հաւատարիմ Սիրելոյն իմոյ Աղյ Ստեփանոսին Սամուէլեանց զմի զոյգ Երծաթէ գիւղունն, ընդ նոսին և բաշխեմ զմի անթիքայ քարէ մատանին ոսկեայ, յորումնկարեալ տեսանի բնականապէս զպատկիր վարդապետի, զոր պատրաստեցի յատկապէս վասն ասացեալ սիրելոյս, ընդ նոսին ևս առաւելապէս բաշխեմ զներմեռանդ իմ օրհնութիւն հայրական:

Տամ և բաշխեմ Մայր Աթոռին մերոյ սրբոյ Էջմի-

ածնի զմի զոյգ Երծաթեայ մոմակալօ՝ խնդրելով. զի եթէ Սըրքազան Միաբանութիւնն Աթոռոյն արժան համարեսցեն, դիցեն ՚ի գործածութեան տաճարին Աստուծոյ, ՚ի լիշտակի յետին Միաբանի նորին:

Որովհետև յետ ձեռնադրութեան իմոյ. Տիկին Կտարինէ Վասակեանն որ բնակի յերեան Քաղաքի, յոյժ Ըերմեռանդութիւն ցուցանելով նուիրեաց ինձ զմատանին ձեռին իւրոյ ՚ի նշան սուրբ սիրոյ հանդերձ Թաշկինսակով միով, և յետ այնու մինչ ցայսօր թէպէտ չպատահեցաւ ՚ի մէջ մեր թղթակցութիւն, սակայն ես ոչ մոռացայ զնորա այնպէս ջերմեռանդութիւն, վասնորոյ պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց, զի ՚ի ձեռն եղբօր նորին բարեծնուռնդ Գարասիմի Վասիլիանովին հասուցանելնմա զնովուղէն Ծահի պարգևեալ Ծալն, և զմի կապոյտ մատանիս նիլում, որոյ շուրջն յեռեալ ունի զմանր բռնիանդ ալմազք: Նա և պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց տալ եղբօր սորին ասացեալ Գարասիմի Վասիլիանովին զերկու հատ Երօփի շապիկս իմ, և զմի Երծաթեայ բերանքով վառն, զոր տուեալ է ինձ Տէր Յովհաննէս Խաչապսակ Քահանայ Խաչկեան: Եւ որովհետև շապիկքս այսոքիկ են վեց հատք, մնացեալ չորեցունց զերկուսն ընծայեմ Պարոն Յովհաննէսին Սիմեոնով, Ատենադպրին Սինօթի սրբոյ Էջմիածնի, և զերկուսն Պարոն Ստեփանոս Թաղ իանովին: Իսկ եթէ և գտանիցին ՚ի մէջ կայից իմոց չափայ աղլուխք, ուրեմն զըրս հատն վերասացեալ Գարասիմի Վասիլիանովին տալ պատուիրեմ, և զերկու երկու վերջնոցն:

Ի մտանելն իմ ՚ի վանս յԱրանչնորդութիւն մինչ ցայսօր յամենայնի կամ ՚ի գայթակղութեան և ՚ի տրտմութեան, զի Վանքն այսքան Ժամանակաց հետէ կառուցեալ, գոլով Աթոռընդհանուր Պարսիաստանայ և Ճնդկաստանի և Լեալ Մայր մեծամեծ և հարուստ Ժողովրդոց, զիմրդ էր Լեալ, յոր չգտի լոկ ափսէ մի կամ դրգալ, և կամ այլինչ պիտոյք, ըստ որում շարունակաբար ունեցեալ է վանահայր և Արանչնորդ, բայց այսու ամենայնի թող անպարտ մնացեն այնոքիկ, որք ոչ են

շեալ սրտացաւ և հաւատարիմ տանութէր տանս այսմիկ . Իսէ յաղագս չգայթակեցուցանելոյ աղագաւ ապագայ գալացողաց և Առաջնորդաց , Պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , զի զտասն և ֆինդ հատ երծաթեայ դրգալք կերակրի . զվեց չանկալք նոյնպէս երծաթեայ . և զտասն և երկու հատ չայի դըրգալք մինագործ երծաթեայ , զորս ընդիս եմ բերեալ աստ , և մինչ ցայսօր պայծառ պահեալ աչք մոտղաց և ելողաց , տացեն գարձեալ 'ի վայելս Աթոռոյս , և այնպէս իբրև սեփական ստացուածք Աթոռոյս , մուծցեն 'ի ցուցակ և 'ի տումար ստացուածք վանիս : Եւ աւանդեմ սովաւ , եթէ ապառնի գալոցողք , անփոյթութեամբ վատնեսցեն զայսոսիկ , կամ ոչ ընչացուսցեն և կամ յայլ իմն աներեւութութիւն դարձուսցեն , թող պարտական գտցին յատենի Աստուծոյ , որ չմասցին հաւատարիմ տան նորա սրբոյ :

Ա, բու եզերելով զբանս իմ , Պատուիրեմ սիրելի Կտակատարաց իմոց , զի զոր ինչ կամք էր իմ պարգևելոյ պարգևեցի , բաշխելոյ՝ բաշխեցի , ընծայելոյ՝ ընծայեցի , չունիցի ոք թէ յընտանեաց իմոց և թէ յօտարաց ընդդիմանալոյ , և պահանջս ինչ յառաջ բերելոյ յընչից իմոց յետայսու , եթէ լինիցին այնպիսիք . նզովեմ զնոսա նզովիւք Արբազան ձարցն առաջնոց , և հոգեսով և մարմնով գատապարտեմ զայնպիսիսն այժմ 'ի կենդանութեան և իմում , Իսկ մնացեալ քսուք իմ , թէ կտորք , թէ շալք , թէ կերպաթեղէնք . թէ մատեանք , թէ ոսկի թէ արծաթ , թէ քարինք . և թէ այլ ամենայն ինչք , զորս գտանիցի յիմում սեփականութեան , զորս հաւատամ զի զազմոր ժառայն իմ հաւատարմապէս յերեան ածցէ 'ի տես սիրելի Կտակակատարաց իմոց , Պատուիրեմ նոցա զի մանրամասնապէս 'ի ցուցակ անցուսցեն զայնոքիկ և ապա ամրափակեոցեն 'ի սնդկի , և այնպէս առաքեսցեն առ Աթոռն սրբոյ Եջմիածնի , առաքելով ընդ նոսին և զօրինակ ցուցակին վաւերացուցմամբ , 'ի ձեռն զազմար հաւատարմին իմոյ (որ հաւատամ յետ հանգստեան իմոյ , գարձցի նայերկիր իւր) կամ 'ի ձեռն այլ հաւատարմի , զի ժառանդ իմ և Տէր է Մայր Աթոռն սրբոյ Եջմիածնի , և ոչ այլ ոք : Իսկ 'ի մասին զուտ գրամոց իմոց , եթէ յետ նուիրատութեանո , զոր

իններորդ յօդուածովք բաշխեցի Կտակագրութեամբս այսորիկ , աւելացաւ գումար ինչ , զայն մնացեալ գումար ըստ ամենայնի թողում 'ի խօհեմ տնօրէնութեան սիրելի Կտակակատարաց իմոց , զի նոքա տնօրինեցեն վասն նորա , և այնպէս 'ի գործ դիցեն 'ի պէտս աղքատաց ջուղայուս :


Ուրջ ամենայնի և աւարտ բանից իմոց աւանդեմ և զայս սիրելի Կտակակատարաց իմոց . զի յայտնիկ ամենեցուն մանաւանդ և ինքեանց , զի 'ի մասնեն մեր աստ , ըստ յանձնարարութեան Սինօթին Եջմիածնի և միջնորդութեամբ նախկին Դեսպանին Ռուսաց , որ 'ի Դրան Պարօից Պայծառափայլ Կնիազ Գոլզորուգովին , յանձնեցաւ մեզ ամենայն կահք և ստացուածք Հանգուցեալ Յովհաննէս Սուրբենեան Արք Եպիսկոպոս նախորդին իմոյ 'ի պահ , և յետ որոյ շտա համապատասխանի արարի ընդ Սինօթին որբոյ Եջմիածնի , վասն մեծամեծ պարտուցն զար թողեալ էր Հանգուցեալ նախորդն իմ 'ի վերայ վանիս : Բայց մինչ ցայսօր ոչինչ բացասական պատասխանիտ ընկալայ 'ի նոցանէ զայնմանէ : Վամսորոյ պատուիրեմ սիրելի Կտակակատարաց իմոց , վասն այնոցիկ ստացուածոց , զի ամրափակեսցեն ցուցակաւ 'ի սնդկոջ (քանզի տարբերութիւն շտա երեցաւ 'ի մէջ առաջին ցուցակին և ստացուածոցն 'ի յանձնառութեանս ժամանակի որպէս յայտնի է բազմաց (հանդերձ նորին պատկանեալ մատենիւք (որոց մասն պատկանի գրքատան սրբոյ Եջմիածնի) և այսպէս 'ի ձեռն հաւատարմի ուրուք առաքեցեն առ սուրբն Եջմիածին : Ընդ նոսին և պատուիրեմ յատկապէս զի Կայսերապարգև Պնակէն ընդ այլ պարգևատուութեանց կարի զգուշութեամբ ամրափակեոցեն , զի անկնաս ժամանեսցեն 'ի նպատակ իւրեանց 'ի ոսւրբ Աթոռն Եջմիածին :

Ի վախճան կտակիս , յանձն առնեմ զանձն իմ և ըզհոգի 'ի խնամս բարերարին իմոյ Ցիսուսի , հաւատամ զի նա երյոյս իմ և զօրութիւն մինչ ցայսօր , և յետ այսու նովին սրբութեամբ հասանել ինձ մնայ անհուն երանութեանն Աստղութոյ . յոր եղեալ էր զակնկալութիւն իմ 'ի մանկութենէ իմմէ , և կամ յոր եղեալ էր զակնկալութիւն իմ 'ի մանկութենէ իմոյ :

լեցայ, գիտելով զչարն կամաւ կորացայ, 'ի պաշտօնի իմումմարդահաճութեամբ անցի և աշառութիւն, 'ի գործ եղի, բայց և այնպէս նա գալով մի միայն անսղալ և անարատ, աղաչեմ ըղներումն սխալանաց իմոց, և արժանի ինձ հանդիպման իւր սուրբ տեսութեան: Օրհսեսցէ Տէր զընդհանուր Ազգ Հայոց, և գթութիւն նորին սուրբ յարատեասցէ շուրջ զնոքօք յաւիտեանս ժամանակաց: Օրհսեսցէ Տէր և զկտակակատարս իմ զՏէր Մարտիրոսն և զՊարոն Յարութիւն զի կատարեալ ուշիմութեամբ վարեսցեն, զկամս իմ անզանազանութեամբ և զմամն բարիս ընկալցին 'ի հանդերձելումն: Ամէն:

Կրեցաւ զայս 'ի Զուղայ յԱմենափրկչեան Սուրբ Պանիս, յամի Տեառն մի հազար ութ հարիւր յիսուն և հինգ: Է չորրորդում Նոյեմբերի ամսոյ:

(Ձեռն) Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց



Դ տես և 'ի ներկայութեան մերում ստորագրեաց և կնքեաց, և մեք վկայօղքս 'ի տես

միմեանց վկայեմք 'ի հաստատութիւն:

- (Ձեռն) Տէր Եղիազար Անդրէասեան
 „ Տէր Գէորգ Գ. Արդանսեան
 „ Տէր Յովսէփ Ա. Նազարէթեանց
 „ Տէր Մկրտիչ Տէր Կարապետ Գրիգորեան
 „ Կարապետ Գ, Յակոբեանց
 „ Յ. Մ. Զօրաբեան
 „ Սարգիս Թ, Աբգարեանց

Ոստ Սրբազան Առաքելոց թէ կտակ յետ մահուան հաստատուն է, ես Թադդէոս Եպիսկոպոս Բէկնազարեանց: Առաջնորդ Զուղայու Ամենափրկչեան սուրբ Վանաց, 'ի Ժամանակի առողջութեան իմոյ, ունելով անթերի զբանական կատարելութիւն մտաց, իմով անփհական յօժարութեամբ գրեմ և հաստատեմ զայս երկրորդ կտակ իմ, իբրև մասն առաջնորդ կտակի իմոյ, որ գրեալ հաստատեցաւ յամի հազար ութ հարիւր յիսուն և հինգ 'ի շորս Նոյեմբերի, և կամիմ զի այս ևս որպէս յաւելուած մասն նոյն յիշեալ կտակի իմոյ, կատարեսցին պատուերքս զորս 'ի ներքոյ յիշատակեմ:

Լախ սովաւ հաստատեմ և վաւերացուցանեմ զիմ առաջին կտակն, զգրեալն 'ի 4. Նոյեմբերի 1855, ամի. զայս վոփոխութիւն միայն առնելով, զի երկու կտակակատարք ևս՝ որք են ըստ յօժարակամ ընտրութեան իմոյ, Սրբակրօն Տէր Բարսեղ քահանայն Գալստանեան և բազմաշխատ ծառայն իմ Ղազար Օհանեան կցորդ լիցին յամենայն գործս կտակակարութեան ընդերկուց առաջին կտակակատարաց իմոց Արժանապատիւ Տէր Մարտիրոս Աւագ քահանայի Տէր Յովակիմեան, և հարազատ գրագրին իմոյ Պարոն Յարութիւնի թ. Տէր Յովհանեանց:

Երկրորդ պատուիրեմ չորից կտակակատարաց իմոց կտարբել զամենայն պատուէրս իմ զգրեալն 'ի 4. Նոյեմբերի 1855. ամի. կտակի իմում, և զոր գրեմ 'ի սմա:


Երկրորդ պատուիրեմ կտակակատարաց իմոց, Ժառային իմոյ Ղազարօսին Օհանեան սակս բազմամեայ հարազատ ծառայութեանցն իւրոց, զոր արարեալ է առիս, տալ զորս ես պարգեեմ ընծայեմ և սովաւ շնորհեմ նմա, մի կապոյտ եաղութ մատանի որոյ շուրջն է ալմազ, մի ալմազ մատանին զոր 'ի Տէր Յակոբ քահանայէն զնեալ եմ, և մի փիրուզայ մատանի, զոր Նասրօլայ Սարթիին է ընծայեալ մեզ, և մի հատկարմիր եալութ մատանին, զոր 'ի նոյն Ղազարէն զնեալ եմ. 'ի Կերպասեղինաց իմոց որք անկար իցեն տասն թումանաց արժողութեամբ. Ի միւս իրաց (այսինքն յաղլխնոց 'ի ջօրաբից և

՚ի մանրատեսակ ընչ ից իմոց) քօան թումանաց արժողութեամբ, և յարծաթեղինաց իմոց՝ երեսուն թումանւոյ արժողութեամբ : Զայս ամենայն թօղումտամ և պարզեցմ զազար Օհանեան ծառային իմոյ :

Չորրորդ, յաղագտ հարսանեաց ծախուց յիշեալ զազար Օհանեան ծառայի իմոյ, տամ պարզեցմ և ընծայեմ զմի հարիւր թուման Պարսից ոսկի դրամ, և ամուսնոյ նորին՝ ի նշան հայրական օրջութեան իմոյ, տամ՝ թողում և ընծայեմ զմի թիրմաշլ (որ իցէ ՚ի լաւ տեսակէն զոր ունեմ) սակա կրելոյ ՚ի գլուխի իւր, Եւ զայտմի հարիւր թուման ոսկի դրամն, Պատուիրեմ Կտակակատարաց իմոց, զկնի մահուան իմոյ. ընդ յիշեալ թիրմաշլին՝ յանձնել զազարս ծառայիս, եթէ չիցէ ամուսնացեալ ՚ի կենդանութեան իմում: Գրեցի զայս կտակ ՚ի ջուղա որ յԱպահան ՚ի սուրբ Վանս յԱմենափրկչեան միով աւուրբ նախ քան զելանելն մեր ՚ի ջուղայց ՚ի թէհրան, յերեք նյուեմբերի ամսոյ: յամի փրկչական մի հազար ութ հարիւր յիսուն և ութն և մեր ազգական ՌՅԲ: Եւ ստորագրեմ ՚ի սմա իմով իսկական ձեռամբ, նա և գրոշմեմ զիմ պաշտօնական կնիք :

(Ձեռն") Պարսկաստանայ և Հնդկաստանի Հայոց

Եպիսկոպոս Թալդիկոս



Եւ ներկայութեան մեր ձեռնագրեաց և կնքեաց որով վկայեմք (Ձեռն") Խոնարհ Տէր Գէորգ Յ. Էլիազեանց :

- ” Տէր Գէորգ Գասպարեան :
- ” Տէր Կարապետ Տէր Աւետեան :
- ” Տէր Դաւիթ Ա. Բարաղամեանց :
- ” Կարապետ Տէր Յովհաննէս Գալստանեանց :
- ” Յ. Մ. Միքայէլեան :

՚ Պատուելի Հասարակութենէ Ջուղայու ընտրեալ իրաւարաց բացի ժողովրդեան երկուց քահանայից և երկու աշխարհականացիտ: Զկնի օրէսանուէր ողջունի, ազդ առնեմք :

Մեք ունեմք գրեալ զկտակակագիր յազագս մեր անձնական զոյից և ստացուածոց, յորումնշանակեալ կան Կտակակատարք մեր, ունիմք նա և զայլ կտակօրէն պատուիրանագիր ՚ի մասին վանքական բարեկարգութեան, յորումնոյնպէս նշանակեալ կան Կտակավարիչք սրբոյ վանին: Ցանկամք և պատուիրեմք, զի յորժամ ՚ի գործ դիցեն նոյն առաջարկութիւնք և րեմք, կուք և որպէս վկայք գործակցութիւն ու պատուէրք մեր, կուք և որպէս վկայք գործակցութիւն ունիջիք յիրողութիւնն յայնոսիկ: Ի ջուղայ, յԱմենափրկչեան սուրբ Վանի յշ Նոյեմբերի 1858: և ՌՅԲ:

(Ձեռն") Պարսկաստանայ և Հնդկաստանի Հայոց Եպիսկոպոս Թալդիկոս

Համար 703 :

Յուցակ ստացուածոց ՚ի Տէր Հանգուցեալ Մրբազան թագդէու Արք Եպիսկոպոս Վանապատիւ Վաննորդի սրբոյ Ամենափրկչեան Վանաց, յուցակագրեալ՝ իներկայութեան ՚ի ներքոյ ստորագրուաց : ՚ի 24. Յունլարի 1863. ամի:

Մի հատ մուրհակ վասն քառասուն և հինգ թումանի, տուեալ ՚ի Պարոն Գրիգոր Ստեփաննոսէն ՚ի 20. Ապրիլ 1861. ամի վասն 6. ամսեայ ֆամանակի :

Մի հատ մուրհակ վասն երեսուն թումանի տուեալ ՚ի Պարոն Գալստ Միքայէլէն, ՚ի 1. Հոկտեմբերի 1862. սակս վեց Յ. Մ. Միքայէլէն :

Մի հատ մուրհակ ՚ի Տէկին Մարիամջան Աւետքեան վասն երեսուն թումանի, տուեալ ՚ի 1. Նոյեմբերի 1861. սակս մոյ տարւոյ .



Մի հատ Պարսերէն մուրհակ՝ ի Տէր դաւիթ, Մկրտումմէն վասն մի հարիւր թումանի, տուեալ՝ ի 20. Սեպտեմբեր 1862:

Մի հատ մուրհակ՝ ի Տէր Ստեփանոս Բարաղամէն, վասն երեսուն և մի թումանի, տուեալ՝ ի 6. Դեկտեմբերի 1862:

Մի հատ Պարսերէն մուրհակ, վասն տասն թումանի, տուեալ՝ ի կնոջէ Մէյթի Հասան Աղայի:

Մի հատ մուրհակ վասն տասն և չորս թումանի տուեալ յիշուր Մանուկէն, ՚ի 12. Փետրվարի 1862. ամի:

Այսէ պարտիքն Տէր Մարտիրոս Յովհանի:

Մի հատ մուրհակ տուեալ՝ ի Պարոն Եղիսյան Տէր Յարութիւնէ, վասն քառասուն և եօթն թումանի՝ ի 10 Մարտ 1859: սակա տալը յետ 14. ամսոց:

Մի հատ մուրհակ վասն հինգ թումանի, տուեալ՝ ի Խաթուն Աւետքէ՝ ՚ի 24, Սեպտեմբեր 1862. յետ վեց ամսոց:

Մի հատ մուրհակ վասն երեք թումանի, տուեալ՝ ի Տէր Յովհաննէս Մարկոս՝ ՚ի 1. Նոյեմբեր 1862, ամի:

Պահանջմուրհակի պահանջք, որք երևեցան՝ ՚ի գործոց զբագրութեանց Նորին բարձր Արքազնութեան,

Մի բարաթ յանուն Պարոնայք Յովհաննէս և Մէլքում Մ. Մովսիսի. վասն երեք հարիւր քսան և հինգ) 325) կոռ ռուփեաց:

Մի հատ բարաթ յանուն Պարոն Մարտիրոս Յ. Կարապետի սակա երկու հարիւր (200) կո՞ ռուփեաց:

Այն երկու բարաթք առաքեցան առ Հօգաբարձուս Բթաւիոյ Հայոց Եկեղեցոյ, սակա առնելոյ և առաքելոյ:

Մի հարիւր ոսկի Հոլանդիոյ յԱղայ Սուքիսէ Թաղիանոսեան, յԱտենադպրէ Սինոդին որբոյ Էջմիածնի:

Ի Պարոն Մանուկ Որդանանէ, ծախք սակա առաքեալ չորից տղայիցն՝ ի Տփխիս 621. ռուփի նշանակեալ՝ ՚ի 28. Օգոստոսի 1862. ամի. 418. Համարաւ գրութեանն:

Յաղայ Գէորգ Ծիրաղանէ, իւր անձնական հաշոյ մնացարդ քառասուն և ինն ռուփի, (Տես՝ ՚ի մի Դեկտեմբերի 1862 ամի. 633. Համար գրութեանն Նորին Արքազնութեանն):

Ոսկիք Հոլանդիոյ հարիւր տասն և ութն :

Ոսկիք Պարսից Երկու:

Մսխալանոց Ոսկի տասն և մի :

Ղազի ոսկի և հին տասն և կէս, որոց կշիռն է եօթն մսխալ և 6. նօխուդ:

Պարսից ռուփիք, տասն և երեք թուման:

Պարսից կէս ռուփիք, վաթսուն և հինգ թուման:

Մի հատ արծաթի հին անթիքայ:

Մի հատ արծաթ մառչիլ:

Տասն և հինգ հատ հասարակ լալ և եաղութ:

Վառասուն և մի հատ ֆասլ ակունք:

Տասն և ութն հատ արծաթ մատանիք, որոց ակունքն են լալ դօռ և շիշայ:

Երկու հատ արծաթի գուգան ջրոյ նուիրեալ՝ ՚ի կնոջէ Պայծառափայլ Դոլզօրուգով Դիսաբանին Ռուսաց:

Տասն երկու հատ արծաթի կերակրոյ գդալ, կշիռն է 147, մսխալ:

Մի մեծ արծաթի գդալ: Քսան և երկու մսխալ:

Հինգ հատ արծաթի չանգալ, յիսուն և հինգ մսխալ:

Տասն և մի հատ մինայ չայի գդալ, յիսուն և չորս մսխալ:

Մի հատ մինայ արծաթի թաս, մի հարիւր քսան և երեք մսխալ:

Մի հատ արծաթի թաս, քառասուն և ութն մսխալ:

Մի հատ մինայ թասի կափարիչն, քսան և չորս մսխալ:

Մի հատ արծաթ ջամ, երեսուն և չորս մսխալ:

Մի հատ ջամ ոսկեջրեալ, քսան եօթն մսխալ:

Մի հատ արծաթի ջամ, յիսուն մսխալ:

Մի հատ փոքր թաս գինույ, տասն երկու մսխալ:

Մի հատ կափարիչ թասին Տէր Յովհաննու, տասն և չորս մսխալ:

Երկու հատ արծաթ մոմղան, հարիւր իննսուն մսխալ:

Երկու հատ աղաման, քսան և մի մսխալ:

Մեց հատ չայի գդալ, երեսուն եօթն մսխալ:

Մի զոյգ ոսկեզօծ չափաստ, եօթն մսխալ:

Մի զոյգ ոսկի չափաստ, ինն մսխալ:

Ա՞ թութունաման տասն երկու մսխալ :
 Ա՞ ի ի քսան և մի մսխալ :
 Ա՞ ի ի սսկեզօծ երեսուն և մի մսխալ :
 Ա՞ ի ի երեսուն և եօթն մսխալ :
 Ա՞ ի ի մինայ տասն և ութն մսխալ :
 Ա՞ ի ի մինայ տասն և ինն մսխալ :
 Ա՞ հատ փանզար քարէ թութունաման :
 Ա՞ հատ սադաֆէ թութունաման շուրջն երծաթապատ :
 Ա՞ հատ արծաթի փօչ, նուէր Տէր Նիկղայոսի, հարիւր քսան
 և հինգ մսխալ,
 Ա՞ զոյդ աղման, քսան և վեց մսխալ :
 Ա՞ հատ ձեռաց խաչ քսան և երկու մսխալ :
 Ա՞ հատ ոսկէ զնջիլ սահաթի, զնեալ երեսուն և հինգ թու-
 մանով
 Ա՞ եց հատ մեծ և փոքր տատրուկ թութունաման փորուածոյ :
 Երեք հատ տատրուկ թութունաման :
 Ա՞ հատ
 " " " արծաթապատ :
 Ա՞ հատ
 " " պատկերաւոր :
 Ա՞ հատ խոշորացոյց արծաթապատ :
 Ա՞ հատ խոշորացոյց Սաղափով :
 Ա՞ հատ ոսկի ժամացոյց, նուէր Տէր Յովհաննու, իւր զնջլով :
 Ա՞ մէն հատ ակնոցք, արծաթ կոթերով, ոսկեզօծեալք :
 Ա՞ որս հատ հին արծաթ գրամք երեք մսխալ .
 Ա՞ ոսկեզօծ գաւազանի գլուխ տասն և երկու մսխալ :
 Ա՞ հատ կողմնացոյց սահաթի ձեւ շինեալ :
 Հինգ հատ հասարակ ակնոցք :
 Ա՞ ի հատ մեծ չախու ,
 Ա՞ որս հատ չախու .
 Ա՞ ի գաւազանի գլուխ և ոտքն եաշմ :
 Երեք հատ մինայ խաչելութիւն, վասն պարանոցի խաչի :
 Ա՞ ի շար (33) հատ քարիբար համրիչ 23. մսխալ :
 Ա՞ ի շար (35) " " " 18 մսխալ :
 Երկու շար եօսր համարիչ :

Ա՞ ի շար խոշորահատ
 Երեք շար մանրահատ } Թիֆլիզայ համրիչ :
 Ա՞ որս հատ կնիք Եպիսկոպոսական մեծ և փոքր
